50՝ քննութեան տակ, 61 տեղափոխուած դանդաղ բանտեր և 5՝ արտաքսուած Հայաստանից: Արտակարգ դատարանները ոմանք չփոթում են «չէկա»-յի հետ, որ բոլորովին սխալ է: Արտ. դատարանը զուտ դատաստանական ատեան էր, միայն պարզացուած գործավարութեամբ և մահապատժի իրաւունքով: Նրա դերն էր արագ դատավարութեամբ պայքարել պետական դաւաճանութեան և չարաշահութեան դէմ: Երևանի արտ. դատարանի կազմն էր — Նախագահ՝ բժ. Ց. Տէր-Դաւթեան, անդամներ՝ Ա. Աբեղեան և բժ. Ց. Մելիքեան, դատախազ՝ Խ. Թիւթիւնճեան: Մինչև յուլ. 15 Երևանի արտակարգ դատարանը 41 հոգի արտաքսեց Հանրապետութեան սահմաններից: Ալեքսանդրապոլի արտակարգ դատարանի նախագահն էր Գ. Վարշամեանը, դատախազ՝ բժ. Բ. Բաղդասարեանը: Արտակարգ դատարաններ կազմուեցին և Կարսում, Դիլիջանում, Նոր-Բայազէտում: Բոլշևիկները անհեթեթ լուրեր էին տարածում նրանց մասին: Ցուլ. 6-ին Մոսկւայի ռադիոն հեռագրում էր «ամենքին, ամենքին, ամենքին», որ Երևանի արտակարգ դատարանում դատուած են 22 կոմունիստներ, որոնցից 2 հոգի դատապարտուած է մահուան, 4 հոգի՝ ցմահ տաժանակիր աշխատանքների և որ, իբր թէ, դատավարութեան օրը տպարանական, երկաթուղային և այլ ձեռնարկութեանց բանուորները բողոքի գործադուլ են արել: Մոսկւայի մի ուրիշ ռադիո հաղորդում էր, որ Կարսի շրջանում դնդակահարուած են 100-ից աւելի կոմունիստներ: Աւելորդ է ասել, որ երկուսն էլ չինծու էին:

Արտակարգ պայմաններում արդարադատութեան նախարարութիւնը զբաղւում էր երկրի դատաստանական գործի կարգաւորումով: Նախարարութեան կից գործում էր մասնագէտների մի յանձնաժողով օրէնքների հայացման, նոր օրէնքների մշակման, դատաստանական բառակազմ ու բառարան խմբագրելու համար: Օգոստոս ամսին Հայաստանի ամբողջ դատաստանական գործը արդէն՝ վերից վար՝ ազգայնացուած էր: Օգոստոս 18-ին հանդիսաւոր կերպով բացուեց Կարսի Շրջանային Դատարանը՝ Հ. Մելքումեանի նախագահութեամբ և Կայեալեանի դատախազութեամբ, որով Հայաստանը ունենում էր երեք շրջանային դատարաններ—Երևանի, Շիրակի և Կարսի:

Կրթական գործը առանձնապէս խոստմնալից ապագայ էր ցոյց տալիս: Որոշուել էր 1920—21 ուս. տարում բանալ 1500 տարրական դպրոց, հիմնական բարեփոխութեան ենթարկել միջնակարգ կրթութիւնը, բանալ մի շարք մասնագիտական կրթարաններ: «Թիւրքահայ», «ռուսահայ» դպրոցների դրութիւնը ջնջուած էր: Յունիս 21-ին կառավարութիւնը վճռեց Երևան փոխադրել համալսարանը, յատկացնել նրան նախկին Ուսուցչական Սեմինարիայի շէնքը, մշակել համալսարանի կանոնադրութիւնը, հրաւիրել նոր ուսուցչապետներ և այլն: Այդ նպատակով կազմուեց մի յանձնախումբ վարչապետից, հանրային կրթութեան ու խնամատարութեան նախարարներից և ակադ. Ա. Թամանեանից: Համալսարանը պիտի բացուէր հոկտ. 16-ին, 4 բաժիններով՝ պատմա-լեզուաբանական, իրաւաբանական, բնագիտական և